

մտածէր զՍարգիս ազատելու: Ասոնք յաջողեցան չեւանը կաշառելով՝ գէթ բանտ մտնել եւ Սարգսի հետ տեսնուիլ: Այսպէս ամիս մը մնալէն ետեւ՝ տեսնելով որ Կիպրոս գացող նաւ չկայ, նաւեցին քիոս (Սֆլըշ քաղաք), ուր դարձեալ բանտարկուեցաւ, եւ նոյն տեղ հայ չգրտնուելուն՝ բոլորովին լքեալ վիճակի մէջ մնաց: Շատ օրեր ետքը Կիպրոս գացող նաւ մը գտան սակարկեցին, դրամը տուին՝ յաջորդ առտու նաւելու համար: Սակայն նաւը գիշերը մեկնած գացած էր, եւ իրենք դարձեալ մնացին:

Այս միջոցին Կ.Պոլիս Սարգսի բարեկամ Ամիրանները կ'աշխատէին զինքն ազատելու: Ասոնք Յակոբ Պատրիարքին գացին զինք համոզելու՝ որ արձակել տայ զՍարգիս. ասոնց հետ գացած էին նաեւ Սարգսի ծերունի մայրն եւ երկու ամուսնացեալ քոյրերը, որոնք Յակոբի ոտքն իյնալով՝ լացին եւ Սարգսի ազատութիւնը խնդրեցին: Այն օրերն Սարգսի չեւանէն նամակ եկած էր Բարձրագոյն Գուռը, որուն մէջ չեւան կը պատմէր անցածը եւ կ'իմացընէր որ Կիպրոս երթալու նաւ չգտնելուն՝ նոր հրամանի կը սպասէ: Սարգիս ալ իրեններուն նամակ գրեց, պատմելով նեղութիւնները, կապանքն ու ծախքերը. նոյնպէս Յակոբին ալ գրեց իր սրտին ցաւերն ու զրկանքները, եւ յիշեցուց անոր ահեղ դատաստանին օրը: Այն ատեն Յակոբ կակղացաւ, եպարքոսին ծանարտակ մը գրեց եւ խնդրեց որ Սարգիս քիոս կղզւոյն վրայ ազատ ձգուի ու հոն կեանքն անցընէ: Նոյն Ղազար եւ Պետրոս տարին յան-